

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ  
Թեմա՝ « Հայոց լեզվի դրվատման արտացոլումը հայ  
գրողների ասույթներում և հոդվածներում»:

Ուսուցիչ՝ Բարսեղյան Ռիմա Պարզիկի  
Երևանի Ա.Զեխովի անվան N° 55 հիմնական դպրոց

Գիտական ղեկավար՝ Գայանե Մկրտչյան

Երևան 2017 թ.

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

**Թեմայի արդիականությունը:** Մեր լեզուն այնքան հին է, ինչքան մենք ենք, իսկ թե ինչքան հին ենք մենք, նույնիսկ ներկայիս գերհզոր ուղեղներն անգամ դեռ չեն կարող պատկերացնել: Ազգի ինքնությունը, նրա լինելիությունը պայմանավորված է լեզվով, հավատով, այսինքն՝ նրանով, ինչով առանձնանում է այլ ազգերից: Մեր արահետը հեշտ չի ընթացել, մեր ուղին հանգիստ չի անցել: Մեր պատմությունը խոսուն է. այդ մասին վկայում են սեպագրված շատ հիշատակարաններ:

Հայոց լեզվի ուսուցումը՝ որպես ուսուցման հիմնական լեզու, անընդհատ է ու սերտորեն կապված է սովորողի ամենօրյա գործունեության հետ: Այն պետք է նպաստի սովորողի բնականոն, անկաշկանդ, ստեղծագործող, տրամաբանող, ազատ արժեհամակարգի ձևավորմանը: Հայոց լեզուն՝ որպես հիմնական լեզու, անընդհատ է և ամենուր: Այն առկա է գործունեության բոլոր ձևերում: Ուսումնական միջավայրը նպաստում է, որ սովորողն, առանց սխալվելու վախի, արտահայտի իր մտքերը, կարծիքը, հույզերը:

Ամեն ժողովուրդ ունի իր մայրենի լեզուն: Լեզուն մեծ նշանակություն ունի մեր կյանքում: Հայերիս մայրենին հայոց լեզուն է: Հայոց լեզուն աշխարհի ամենահին, քաղցրաբառ լեզուներից է: Այն շատ գեղեցիկ և հարուստ լեզու է: Այն հայ ժողովրդի մեծագույն հարստությունն է: Ճիշտ է, շատ կարևոր է, որ մարդ իմանա օտար լեզուներ, սակայն միշտ պետք է հիշի, որ հարազատը իր մայրենին է:

**Աշխատանքի նպատակը:** Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել և ներկայացնել հայոց լեզվի դրվատման արտացոլումը հայ գրողների ասույթներում և հողվածներում:

Արժևորել այն, որ հայերենով հայը ոչ միայն մայրենի լեզու է սովորում, այլև հաղորդակցվում է համաշխարհային քաղաքակրթության արմատներին:

**Աշխատանքի մեթոդական և տեղեկատվական հիմքերը:** Աշխատանքում առաջադրված խնդիրների լուծման համար մեթոդական հիմք են ծառայել մի շարք

հեղինակների կողմից իրականացված հետազոտությունները, հրապարակված գիտական աշխատությունները և դրանցում ներկայացված տեսակետները:

**Աշխատանքի կառուցվածքը և ծավալը:** Աշխատանքը բաղկացած է ներածությունից, մեկ գլխից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից: Աշխատանքային տեքստը կազմում է 12 տպագրական էջ :

## **ԳԼՈՒԽ 1.**

### **ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԴՐՎԱՏՄԱՆ ԱՐՏԱՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԻ**

#### **ԱՍՈՒՅԹՆԵՐՈՒՄ ԵՎ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ**

*Հայ լեզուն է այն սարսափելի ուժը, որի ընդդեմ տկար են նաև միլիոնավոր բարբարոսների սվինները: Լեզուն է ազգությանց դրոշակը, լեզուն է նոցա որպիսության և վիճակի հայտարարը<sup>1</sup>:*

*Միքայել Նալբանդյան*

Յուրաքանչյուր հայիս գոյությունն ու ինքնությունը սկսվում է լեզվից, ու մեր ականջին հնչած առաջին մեղեդիների հետ ծնվում է հայոց լեզուն հազարագանձ՝ մեր ոսկեդենիկը, որտեղ միտքն անսահման ազատ է, ու հոգին՝ անեզր: Այդ անսահմանի ու անեզրի մեջ էլ ապրում է հայի ոգին:

Վսեմ են հայի ոգին, էությունն ու նվիրվածությունը, և հայ լեզուն մշտանորոգ ու կանգուն պահելը ավելի է վսեմացնում նրա ինքնությունը, մաքրում խիղճը: Իսկ մեր խիղճը մեր լեզուն է, մեր մաքրությունն ամենից առաջ: Եվ սրբությունը: Քիչ սրբություններ չունի մարդ արարածը, բայց սրբության սրբոցը նա դարձրել է մայրենին, դարձրել է ոչ միայն հացը իր սեղանի, այլև այն նշխարը, որ գորացնում է, պարզևում աստվածայինը, ու գոյատևել, երբեմն, ավելի շատ լեզվով, քան հանապազօրյա հացով: Մարմնական ուժի դեմ՝ հոգու գորություն, ահռելի բազկի դեմ՝ հուժկու կամք, համընդհանրության դեմ՝ վառ ինքնություն, ու ծնվեց արդար կանչը՝ «ճանաչել զիմաստութիուն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ...»: Ու հազարագանձը դարձավ Աստծո հետ խոսելու աղոթքի լեզու, դարձավ երաժշտություն, պերճություն, ուժ, ճկունություն ու...համը մեր բերանի:

<sup>1</sup> Մ. Նալբանդյան, Երկեր, Երևան, 2014, էջ՝ 14:

Դարերի խորքից սկիզբ առած ու հավերժության ձգտող լեզուն օջախի ծուխն է ամբողջ աշխարհով սփռված հայության համար, այն ջերմ օջախի, որ իմաստավորում է կարոտը, ապրեցնում հեռվում: Եվ չնայած այդ սփռվածությանը՝ մեկն է հայի հոգին, նրա ազգային կերպարանքը, նրա մշակույթը: Իսկ հայրենիքը նախևառաջ լեզուն է՝ ինքնարտահայտվող ու չփոխակերպվող:

Ժամանակի քառսում ինքնաճանաչումը, հույսն ու հավատն էին շարունակության երաշխիքը, որ եղավ շնորհիվ Մաշտոցի: «Լինե՞լ, թե չլինե՞լ» հարցին միանշանակ «լինե՞լ» ասելով՝ Մաշտոցն անասելի երկբայությունը դարձրեց հաստատակամություն ու դարձավ աղը մեր ինքնության: Ունեցանք մեծ հավատ, հզոր մշակույթ, որ հային հայ պահեցին աշխարհում, տվեցին ուժ ու իրավունք նոր քաղաքակրթությունների ու ինքնադրսևորման պայքարում՝ մեր տեղը հաստատելով արևի տակ:

Իր ազատության համար պայքարող ժողովուրդը, լեզուն անառիկ պահելով, այն գորեղ բանալին է ձեռք բերում, որ դեպի բաղձալի ազատությունն է տանում: Մեր լինելիության հիմքը, մեր հաղթանակների ու հզոր կամքի գաղտնիքն էլ մեր հազարագանձն ու ոսկեղենիկն է, որը մեծագույն հարստություն կարող է համարվել ամեն մի ազգի համար: Ինչպես եկեղեցու շենքն է պատմական հուշարձանից վերածվում կենդանի ու ապրող տաճարի, երբ մենք այն լցնում ենք աղոթքով ու շարականով, այնպես էլ լեզուն է ապրում, երբ շունչ ու հոգի ենք տալիս նրան մեր խոսքում, մտքերում ու մեր գործերում: Երբ Նարեկացու «Մատյանն» է գրվել հայերեն, թվում է, թե եկեղեցիների զանգերը հայերեն են դողանջում:

Մենք հայ ենք, ադամանդի պես խտացված է մեր հայրենիքը, հայոց լեզուն, ու որքան անաղարտ է մեր լեզուն, այնքան լուսավոր կլինի երկիրը: Այդ լույսի համար շարունակական է մեր պայքարը, պայքար, որ մարդ արարածը սկսել է հենց իր լինելիության սկզբից: Այդ պայքարից ծնվում են ստեղծարար ուժն ու մեծ ազատությունը, որով հնարավոր է նվաճել աննվաճելին: Ու քանի դեռ հայ մանուկի շուրթերից հնչում է հայերեն «**այբ-բեն-գիմ**»-ը, մի ողջ ժողովրդի սկիզբն ու շարունակությունը կդառնան հավերժ ընթացք:

Կորցնելով պետական անկախությունը՝ հայ ժողովուրդը կորցրեց այն կարևոր լծակը, որով պաշտպանվում էր ռազմատենչ հարևաններից: Մեր ժողովրդի համար այդ օրհասական պահին հայ գործիչները հուժկու շարժում սկսեցին՝ ապահովելու

հայության մշակութային անկախությունը: Ստեղծվեց ազգապահպանության մի նոր ու հզոր զենք՝ ի դեմս հայոց գրերի: Դրանք հայ ժողովրդին հարատևություն ու կենսունակություն պարգևեցին հետագա փորձություններով լի դարերի ընթացքում: Հայ ժողովրդի հանճարեղ զավակ Մեսրոպ Մաշտոցի ձեռքով ստեղծվեցին հայոց գրերը, որոնցով մինչև օրս գրում ու կարդում ենք մենք:

Հայոց այբուբենի ստեղծման համար պարտական ենք մեծ ուսուցչին՝ Մեսրոպ Մաշտոցին: Նրա շնորհիվ 405 թվականին ստեղծվեց ադամանդակուռ այբուբենը: Այդ օրվանից ծաղկում ապրեց հայ մշակույթը և թևակոխեց մի նոր շրջան՝ Ոսկեդարյան ժամանակաշրջան:

Առանց Մեսրոպյան գրի չէր կարող գոյություն ունենալ հայ ազգը: Մեր գիրը այնքան հին է, ինչքան մենք ենք, իսկ թե ինչքան հին ենք մենք, նույնիսկ ներկայիս գերհզոր ուղեղներն անգամ դեռ չեն կարող պատկերացնել:

Հայերենը ոչ միայն աստվածային լեզու է՝ տրված մարդկանց, այլև աստվածների լեզու է՝ տրված աստվածներին ու տիեզերքին: Հայոց լեզվով կարելի է Աստվածային մտածողությունն ըմբռնել, հասկանալ ու վերծանել, կարելի է աստվածների հետ երկխոսել պարզապես, ինչպես հոգով, այնպես էլ անմիջական խոսքով, որն, իհարկե, բոլորին չէ, որ հասու է, բոլորին չէ, որ տրվում է:

Մեր լեզուն այնքան հին է, ինչքան մենք ենք, իսկ թե ինչքան հին ենք մենք՝ նույնիսկ ներկայիս գերհզոր ուղեղներն անգամ դեռ չեն կարող պատկերացնել: Ազգի ինքնությունը, լինելիությունը պայմանավորված է լեզվով, հավատով, այսինքն ինչով որ առանձնանում է այլ ազգերից: Մեր արահետը հեշտ չի ընթացել, մեր ուղին հանգիստ չի անցել: Մեր պատմությունը խոսուն է. այդ մասին վկայում են սեպագրված արձանագրությունները:

Հայոց լեզվի ուսուցումը հանրակրթական դպրոցներում ունի մի շարք առանձնահատկություններ: Երեխան մայրենի լեզվի կրողն է: Նա լավ ,թե վատ, ճիշտ ,թե սխալ անընդհատ հաղորդակցվում է, ճանաչում ինքն իրեն, արտահայտում իր մտքերը, փորձում հասկանալ ու հասկանալի լինել:

Հայոց լեզվի ուսուցում ասվածը պայմանական է, քանզի մարդն այն յուրացնում է ամբողջ կյանքի ընթացքում: Երեխան ծնված օրվանից արդեն կրում է մայրենի լեզուն: Կրտսեր դպրոցի խնդիրն է դառնում օգնել երեխային գրավոր և բանավոր խոսքը

Ճիշտ ձևակերպել, կարողանալ արտահայտել իր հույզերը, զգացմունքները ու հաղորդակցվել:

Հայոց լեզվի ուսուցումը՝ որպես ուսուցման հիմնական լեզու, անընդհատ է ու սերտորեն կապված է սովորողի ամենօրյա գործունեության հետ: Այն պետք է նպաստի սովորողի բնականոն, անկաշկանդ, ստեղծագործող, տրամաբանող, ազատ արժեհամակարգի ձևավորմանը:

Հայոց լեզուն՝ որպես հիմնական լեզու, անընդհատ է և ամենուր: Այն առկա է գործունեության բոլոր ձևերում: Ուսումնական միջավայրը նպաստում է, որ սովորողն առանց սխալվելու վախի, արտահայտի իր մտքերը, կարծիքը, հույզերը:

Ամեն ժողովուրդ ունի իր մայրենի լեզուն: Լեզուն շատ մեծ նշանակություն ունի մեր կյանքում: Հայերիս մայրենին հայոց լեզուն է: Հայոց լեզուն աշխարհի ամենահին, քաղցրաբառ լեզուներից է: Այն շատ գեղեցիկ և հարուստ լեզու է: Այն հայ ժողովրդի մեծագույն հարստությունն է: Ճիշտ է, շատ կարևոր է, որ մարդ իմանա օտար լեզուներ, սակայն միշտ պետք է հիշի, որ հարազատը իր մայրենին է: Պետք է սիրով պահպանի մեր մայրենի լեզուն: Իսկ լեզուն պահպանվում է գործածելով, պետք է մտածենք, խոսենք, գրենք, կարդանք, երգենք մաքուր հայերենով, չխառնենք մեր գեղեցիկ լեզվին օտար բառեր: Խոսակցության մեջ տարբեր լեզուների բառեր, արտահայտություններ գործածելը մայրենի լեզվին միայն վնասում է: Լեզվի պահպանման համար մարդիկ պետք է իրար սովորեցնեն, օգնեն, թե ինչպես պետք է ճիշտ խոսել:

Հայ գրողները իրենց ասույթներում, հոդվածներում և ստեղծագործություններում բազմիցս են անդրադարձել հայոց լեզվին:

Միքայել Նալբանդյանը ասել է. «Դպրոցի ազգությունը կախված չէ աշակերտների և վարժապետների լոկ հայությունից. լեզուն է, որ միայն կարող է այդ վերնագիրը դնել դպրոցի ճակատին... Թող ուրեմն հայ մանուկը նախ և առաջ որպես հայի զավակ ուսանի յուր սեպհական լեզուն և ապա՝ օտարինը:

Ազգի հոգին և ազգի սիրտը կարող են յուրյանց հատկությունը և որակությունը մաքուր պահել միայն կերպարանագործվելով ազգային լեզվի ազդեցության տակ. այս ճշմարտությունը ուրացողը ուրացող է ազգության: Հայ լեզուն է այն սարսափելի ուժը,

որի ընդդեմ տկար են նաև միլիոնավոր բարբարոսների սվինները: Լեզուն է ազգությանը դրոշակը, լեզուն է նոցա որպիսության և վիճակի հայտարարը:

Հայոց լեզու, դու մեր անկողնոստելու գանձը եղար, մեր անընկճելի հայրենիքը: Մեր ժողովուրդը կորցրեց գահ և թագ, գորք և իշխանություն, ավեր եղան և ավար մեր բերդերն ու քաղաքները, ավար եղան մեր ինչքն ու ու գույքը, բայց դու մնացիր միայն կանգուն, մնացիր հաղթական: Ցնցոտի հագավ մեր ժողովուրդը, բայց դու ծիրանով ծածկեցիր նրա հոգին, թշնամին ջաղջախեց նրա սրունքը, դու թներ տվիր նրան՝ ժողովրդին<sup>2</sup>:

«Լեզուն է ամեն մի ժողովրդի ազգային գոյության և էության ամենախոշոր փաստը, ինքնուրույնության ու հանճարի ամենախոշոր դրոշմը, պատմության ու հեռավոր անցյալի կախարդական բանալին, հոգեկան կարողությունների ամենաճոխ գանձարանը, հոգին ու հոգեբանությունը»<sup>3</sup>, - ասել է Հովհաննես Թումանյանը: Եվ, այո, առանց հայոց լեզվի հայ ազգը գոյություն ունենար չէր կարող:

Հայոց լեզուն դարերի ընթացքում չի դարձել «քարացած» լեզու, ինչպես օրինակ լատիներենն ու հնդեվրոպական լեզվախմբին պատկանող մյուս հնագույն լեզուն՝ հին հունարենը, այլ շարունակում է զարգանալ՝ լրացնելով իր բառացանկը նորանոր բառերով և քերականական փոփոխությունների է ենթարկվում՝ արդիականանալով և ժամանակակից ոգի ստանալով:

Վիկտոր Համբարձումյանը այսպես է խոսել հայոց լեզվի մասին. «Ինձ հաջորդող սերունդներին, թոռներին, ծոռներին կտակում եմ տիրապետել հայոց լեզվին: Ամեն մեկը պետք է իր պարտքը համարի ուսումնասիրել հայոց լեզուն, գրագետ լինի հայերենից՝ անկախ այն բանից, թե քանի տոկոս է նրա մեջ հայկական արյունը: Այդ տոկոսը ոչինչ չի նշանակում:

Մենք փոխանցում ենք սերունդներին ոչ թե արյուն, այլ գաղափարներ և գաղափարների մեջ ինձ համար ամենաթանկը հայոց լեզուն է: Այդ կապակցությամբ յուրաքանչյուր սերունդ պարտավոր է սովորեցնել հաջորդին հայոց լեզու: Գիտցե՛ք, որ իմ կյանքի ամենամեծ երջանկությունը եղել է ու կմնա, քանի ապրում եմ, հայոց լեզվին տիրապետելը: Ցանկանում եմ երջանկություն բոլորիդ»:

<sup>2</sup> Մ. Նալբանդյան, Ստեղծագործությունների ժողովածու, Երևան, 2012, էջ՝ 45:

<sup>3</sup> Հովհ. Թումանյան, Ստեղծագործությունների ժողովածու, Երևան, 2011, էջ՝ 47:

Լեզուն իրոք մի գանձ է, որին չի կարող փոխարինել աշխարհի ոչ մի հարստություն: Նա ուրախության պահին բացում է մեր սիրտը, իսկ վատ տրամադրության ժամին նա է սփռում մեզ: Ուստի իր մայրենի լեզուն վատ իմացողը կես մարդ է, չիմացողը՝ թշվառ, ծառից ընկած մի տերև, որ տարվում է ամեն մի պատահական քամուց: Լիակատար կյանքով ապրելու համար մայրենի լեզուն պետք է ոչ միայն սիրել աչքի լույսի պես, այլև իմանալ այն անսխալ, լավապես, խորապես: Ամեն սերունդ իր ժողովրդի լեզուն՝ որպես գործիք, որպես զենք, հղկում է, կատարելագործում և հարստացնելով փոխանցում հաջորդ սերնդին: Այդպես անենք և մենք՝ սիրենք, կատարելագործենք և հարստացնենք մեր հայրենի գանձը՝ մեր լեզուն<sup>4</sup>:

Վահան Տերյանը ասել է. «Գրաբարը ոսկի է, դա լեզու չէ, այլ երկնային երաժշտություն, պերճություն, ուժ, ճկունություն, այդ ամենը նոր եմ սկսում զգալ: Եվ ինչպիսի ձախորդությունների էլ հանդիպեմ, և որքան էլ ինձ համար դժվար լինի, ես պատրաստ եմ ամեն ինչի, միայն թե իրագործեմ երազանքս՝ կատարելապես ուսումնասիրեմ այդ արքայական լեզուն»<sup>5</sup>:

Ավետիք Իսահակյանը այսպես է արտահայտվել մեր լեզվի մասին. «Հայոց լեզու, դու մեր անկողոպտելու գանձը եղար, մեր անընկճելի հայրենիքը: Մեր ժողովուրդը կորցրեց գահ և թագ, գորք և իշխանություն, ավեր եղան և ավար մեր բերդերն ու քաղաքները, ավար եղան մեր ինչքն ու գույքը, բայց դու մնացիր միայն կանգուն, մնացիր հաղթական: Ցնցուտի հագավ մեր ժողովուրդը, բայց դու ծիրանով ծածկեցիր նրա հոգին, թշնամին ջախջախեց նրա սրունքը, դու թևեր տվիր նրան՝ ժողովրդին»<sup>6</sup>:

Մեկ այլ առիթով Ավետիք Իսահակյանը նշում է. «Մայրենի լեզվի բառերը մենք զգում ենք, ապրում, իսկ օտար լեզվինը՝ սովորում, հասկանում, հիշում...»<sup>7</sup>:

Հայոց տառերը և հայոց լեզուններ գրականության մշտական թեմաներից են եղել. Թումանյանն ու Տերյանը, Սիամանթոն ու Թեքեյանը, Չարենցն ու Սևակը բազմիցս անդրադարձել են այդ թեմային:

Մուշեղ Գալշոյանի <<Մամփրե արքան>> դրանց շարքում գրավում է մնայուն տեղ:

<sup>4</sup> Ս. Զորյան, Երկերի ժողովածու, հատոր տասներկուերորդ, «Խորհրդային գրող» հրատարակչություն, 1990, էջ՝ 17:

<sup>5</sup> Վ. Տերյան, Մտեղծագործությունների ժողովածու, Երևան, 2011, էջ՝ 95:

<sup>6</sup> Ավ. Իսահակյան, Մտեղծագործությունների ժողովածու, Երևան, 2012, էջ՝ 16:

<sup>7</sup> Ավ. Իսահակյան, Նշված աշխ., էջ՝ 41:



Միջնադարի մեծ իմաստուն Գր. Պահլավունի Մագիստրոսն ասել է . <<Յուրաքան - չյուր մարդ մայրենի լեզվի կարիքը պետք է զգա այնպես , ինչպես հանապազօրյա հացինը>>:

Լեզուն ազգի հոգևոր հացն է :Լեզուն էլ հացի նման է . ոչ հնանում է , ոչ թառամում : Այդպիսին է հենց մեր հայերենը: Պատկերավոր նոր ոճերի ու թևավոր խոսքերի համար հայերենն ունի հազար անգամ հազար տարվա հնարավորություն ու պաշար:

Լեզուն մարդուն տրված ամենամեծ գանձն է: Եվ այն օգտագործելուց ոչ թե հնանում , այլ ավելի կատարելագործվում , զարգանում է:

Բոլոր գիտությունները ուսումնասիրելու համար լեզուն բանալի է: Մարդը ոչ մի բանից այնքան չի օգտվում , որքան լեզվից:

Յուրաքանչյուրիս պարտքն է սրբորեն պահել ու սերունդներին փոխանցել մեր մայրենին: Դպրոցն այն դարբնոցն է , որտեղ երեխան պետք է էլ ավելի մաքրագործի իր մայրենին:

Նար –Դոսը գրում է . <<Հայոց լեզուն , որքան ավելի եմ զբաղվում նրանով , ինձ թվում է , թե ճոխության հրաշք է և ոսկու հանք: Որքան մշակում ես , այնքան զտվում է և շողշողում: Որքա՞ն գույներ ունի և արտահայտչական հնարավորություններ ...>>:

**Ա.Չոպանյանը** գրում է.<<Ո՞վ մեր լեզուն, հայելի մաքրության , գորովի և արիության , դուն մեր հոգին և արյունն ես, դուն մեր զրահն ես ու մեր փառքն ես >>:

**Մուշեղ Իշխանը`** ի լուր բոլորի , մարգարեացել է `գրելով .

**Հայ լեզուն տունն է հայուն աշխարհիս չորս ծագերուն ,**

**ՈՒր կմտնե ամեն հայ իբրև տանտեր հարազատ ....**

**Ս. Մուրադյանն** իր `երգի վերածված բանաստեղծության մեջ ասում է.<< Ամռանն աղբյուր է , ձմռանը հուր է , Մոր տաք համբույր է մայրենի լեզուն ...Ողջ Հայաստանն է , հայոց վառ գահն է ՈՒ միշտ անմահ է մայրենի լեզուն >>:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրությունների հիմնական եզրահանգումներն են.

- Այսպիսով նշենք, որ յուրաքանչյուր հայիս գոյությունն ու ինքնությունը սկսվում է լեզվից, ու մեր ականջին հնչած առաջին մեղեդիների հետ ծնվում է հայոց լեզուն հազարազանձ, մեր ոսկեղենիկը, որում միտքն անսահման ազատ է, ու հոգին՝ անեզր: Այդ անսահմանի ու անեզրի մեջ էլ ապրում է հայի ոգին:
- Հայերենը ոչ միայն աստվածային լեզու է՝ տրված մարդկանց, այլև աստվածների լեզու է՝ տրված աստվածներին ու տիեզերքին: Հայոց լեզվով կարելի է Աստվածային մտածողությունն ըմբռնել, հասկանալ ու վերծանել, կարելի է աստվածների հետ երկխոսել պարզապես, ինչպես հոգով, այնպես էլ անմիջական խոսքով, որն, իհարկե, բոլորին չէ, որ հասու է բոլորին չէ, որ տրվում է:
- Վսեմ են հայի ոգին, էությունն ու նվիրվածությունը, և հայ լեզուն մշտանորոգ ու կանգուն պահելը ավելի է վսեմացնում նրա ինքնությունը, մաքրում խիղճը: Իսկ մեր խիղճը մեր լեզուն է, մեր մաքրությունն ամենից առաջ: Եվ սրբությունը: Քիչ սրբություններ չունի մարդ արարածը, բայց սրբության սրբոցը նա դարձրել է մայրենին, դարձրել է ոչ միայն հացը իր սեղանի, այլև այն նշխարը, որ զորացնում է, պարզևում աստվածայինը, ու գոյատևել, երբեմն, ավելի շատ լեզվով, քան հանապազօրյա հացով:
- Մեր լեզուն այնքան հին է, ինչքան մենք ենք, իսկ թե ինչքան հին ենք մենք՝ նույնիսկ ներկայիս գերհզոր ուղեղներն անգամ դեռ չեն կարող պատկերացնել: Ազգի ինքնությունը, լինելիությունը պայմանավորված է լեզվով, հավատով, այսինքն ինչով որ առանձնանում է այլ ազգերից: Մեր արահետը հեշտ չի ընթացել, մեր ուղին հանգիստ չի անցել: Մեր պատմությունը խոսուն է. այդ մասին վկայում են սեպագրված շատ պատմավեպեր:
- Նշենք, որ հայոց լեզվի ուսուցումը, որպես ուսուցման հիմնական լեզու, անընդհատ է ու սերտորեն կապված է սովորողի ամենօրյա գործունեության

հետ: Այն պետք է նպաստի սովորողի՝ բնականոն, անկաշկանդ, ստեղծագործող, տրամաբանող, ազատ արժեհամակարգի ձևավորմանը: Հայոց լեզուն, որպես հիմնական լեզու, անընդհատ է և ամենուր: Այն առկա է գործունեության բոլոր ձևերում: Ուսումնական միջավայրը նպաստում է, որ սովորողն առանց սխալվելու վախի արտահայտի իր մտքերը, կարծիքը, հույզերը:

- Ամեն ժողովուրդ ունի իր մայրենի լեզուն: Լեզուն շատ մեծ նշանակություն ունի մեր կյանքում: Հայերիս մայրենին հայոց լեզուն է: Հայոց լեզուն աշխարհի ամենահին, քաղցրաբառ լեզուներից է: Այն շատ գեղեցիկ և հարուստ լեզու է: Այն հայ ժողովրդի մեծագույն հարստությունն է: Ճիշտ է, շատ կարևոր է, որ մարդ իմանա օտար լեզուներ, սակայն միշտ պետք է հիշի, որ հարազատը իր մայրենին է:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Մ. Նալբանդյան, Երկեր, Երևան, 2014, 254 էջ,
2. Մ. Նալբանդյան, Ստեղծագործությունների ժողովածու, Երևան, 2012, 415 էջ,
3. Հովհ. Թումանյան, Ստեղծագործությունների ժողովածու, Երևան, 2011, 291 էջ,
4. Ս. Զորյան, Երկերի ժողովածու, հատոր տասներկուերորդ, «Խորհրդային գրող» հրատարակչություն, 1990, 317 էջ,
5. Վ. Տերյան, Ստեղծագործությունների ժողովածու, Երևան, 2011, 294 էջ,
6. Ավ. Իսահակյան, Ստեղծագործությունների ժողովածու, Երևան, 2012, 240 էջ:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....	2
ԳԼՈՒԽ 1. Հայոց լեզվի դրվատման արտացոլումը հայ գրողների ասույթներում և հոդվածներում.....	3
Եզրակացություն.....	9
Օգտագործված գրականության ցանկ.....	11